

3884



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար



Հակոբ Սիմիոյան

«18» 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 065 - 25

Նախաձեռնող՝

«Էկո բիոինգ» ՍՊԸ
ք. Վայք, Երկրաբանների փ. 7

Գործունեությունը՝

Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրի նոր
կրթահամալիրի կառուցում
Սյունիքի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 065 - 25

« 18 » Ճաբարի 2025թ.

Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրի նոր կառուցվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Էկո բիլդինգ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Սիսիան համայնք, Բռնակոթ բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրում:

Հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործման:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս. Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել 09-023-0056-0020 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N20082014-09-0019 վկայականը, 2024 թվականի հունվարի 18-ին Սյունիքի մարզի Սիսիան համայնքի կողմից տրված N6 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրի դպրոցի կառուցապատման համար հատկացվելու է 3,4 հա տարածք: Նախատեսվում է կառուցապատել 3950 մ² տարածք /դպրոցի մասնաշենք, պարիսպ, կաթսայատուն և այլն/: Կանաչապատման մակերեսը կկազմի 4075 մ²: 2053 մ² տարածքը նախատեսվում է բարեկարգել, որպես ճանապարհներ և սալվածքներ: 408.35 մ² տարածքը նախատեսվում է իրականացնել միաձույլ ռետինե մակերևույթից, խաղահրապարակների կամ կից տարածքների բարեկարգման համար: 800 մ² տարածքում նախատեսվում է արհեստական խոտածածկույթ:

Նախատեսվում է քանդել գոյություն ունեցող դպրոցի մասնաշենքերից 3-ը՝ այնուհետև նոր դպրոցը շահագործման հանձնելուց հետո քանդել մյուս երկու մասնաշենքերը:



Նոր կառուցվող 15,5x29 մ առանցքային չափերով եռահարկ դպրոցը կունենա 3.3 մետր վերգետնյա և 2.7 մ նկուղային հարկի բարձրություն, բաղկացած 4 հիմնական մասնաշենքերից, տրանսֆորմատորային ենթակայանից և կաթսայատնից:

Դպրոցը նախատեսված է 350 աշակերտների համար:

Դպրոցի մասնաշենքը կունենա մեծ սրահ, կենտրոնական մասում հիմնականում կլինեն լաբորատորիաները, ուսումնական և անհատական պարապմունքների դասասենյակները, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակները, ուսուցչանոցը: Մասնաշենքն կունենա լայն և լուսավոր միջանցքներ, սանհանգուցյներ աշակերտների, ուսուցիչների և սակավաշարժ խմբի երեխաների համար: Սակավաշարժ խմբի երեխաների համար նախատեսված են նաև վերելակներ: Ուսումնական մասնաշենքի երրորդ հարկում կլինի ռազմագիտության դասասենյակն իր զինանոցով: Տանիքը նախատեսված է հարթ: Երկրորդ մասնաշենքը երկհարկանի է՝ նկուղային հարկով: Մասնաշենքը կունենա 18,0x21,7 մ առանցքային չափեր: Առաջին հարկում է կլինի ճաշարանն իր խոհանոցով և պահեստներով: Երկրորդ հարկում նախատեսված է դպրոցի թանգարանը, գրադարանն իր գրապահոցով: Այս մասնաշենքի տանիքը նույնպես հարթ է:

Երրորդ մասնաշենքը հանդիսությունների և մարզական դահլիճների մասնաշենքն է, կունենա 42x30 մ առանցքային չափեր, կլինի կից գլխավոր մուտքի և սպասարկման մասնաշենքին: Երրորդ մասնաշենքը կենտրոնական հատվածում կունենա 6 մ լայնությամբ սրահ, որը կբաժանի մարզադահլիճը հանդիսությունների դահլիճից: Մարզադահլիճը կունենա 24x18 մ, իսկ հանդիսությունների դահլիճը՝ 18x18 մ առանցքային չափեր: Դահլիճները և միջանկյալ սրահը կունենան երկհարկ բարձրություն: Նկուղում, որն կունենա 1,8 մ բարձրություն, տեղադրված կլինեն դահլիճների ներածման և արտածման օդափոխության համակարգերը:

Բոլոր մասնաշենքերը հագեցած կլինեն ինժեներական և տեխնիկական ժամանակակից սարքավորումներով:

Կառուցվող դպրոցի ջրամիացումն իրականացվելու է գործող Ø150 մմ տրամաչափի ջրագծից:

Ջրամատակարարման ներքին ցանցն օղակաձև է: Հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար նախատեսված են հակահրդեհային ծորակներ: Հակահրդեհային կանգնակներն ընտրվել են Ø57x3.5 մմ տրամաչափի պողպատե էլեկտրատեղակցվող, տաք և սառը ջրամատակարարման կանգնակները և սպառման խողովակաշարը պոլիպրոպիլենե խողովակներից:

Տաք ջրամատակարարման սնուցումն իրականացվելու է կաթսայատնից: Տաք և սառը ջրամատակարարման խողովակները ջերմամեկուսացվելու են ռետինե խողովակաձև ջերմամեկուսիչով:

Կաթսայատան ջրամատակարարման սնուցումն իրականացվելու է երրորդ մասնաշենքից, ջերմատարի վաքի միջոցով, Ø57x3.5 մմ տրամաչափի պողպատե էլեկտրատեղակցվող խողովակով:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Դպրոցի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, երեսապատման բարձրորակ նյութեր, անվազ ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:



Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Գոյություն ունեցող դպրոցի 2 մասնաշենքը ենթակա է քանդման առաջին փուլով, որի արդյունքում գոյանալու է 3683 մ³ շին աղբ, ապա դպրոցի շինության կառուցմից հետո քանդվելու են հին դպրոցի ևս 3 մասնաշենք՝ շինաղբի ծավալը կազմելու է 3073 մ³:

Նոր կառուցվող դպրոցի համար հողային աշխատանքների ծավալը կազմելու է 30342.7 մ³:
Կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատվելու է:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում: Նախատեսվում է կառուցապատումից ազատ հատվածներում կատարել կանաչապատման աշխատանքներ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
 - շինհրապարակը ցանկապատվելու է համապատասխան բարձրության ցանցաթաղանթով,
 - շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացվելու է ջրցան,
 - պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակն ու իրականացվելու է կարգավորում,
 - շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
 - իրականացվելու է շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ,
 - սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
 - աշխատանքների ավարտից հետո մաքրվելու են բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
 - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,
 - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,
 - շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվելու դրանց աղմուկի մակարդակին: Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,
 - դպրոցի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
- Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ.
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
 - փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցան տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,



- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 850 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սյունիքի մարզի, Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրում միջնակարգ դպրոցի կառուցման վերաբերյալ իրականացվել են հանրային լուծումներ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Բռնակոթ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն ինչպես նաև Սյունիքի մարզպետարանն ու Բռնակոթի համայնքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սիսիանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
5. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:



6. Պարսպապատել շինարարական հրապարակները իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով: Թափոնների տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սիսիանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Էկո բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Բոնակոթ բնակավայրի նոր կառուցվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Իսաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնագ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան